1847—9 ՍԵՊՏԵՄԲԵՐ ՆՈՒՄԵՐՈ — 47 ՇԵՎԱԼ 12—1263

# ՑՈՅՑԱՐԱՐ ԼՐԱԳԻՐ
# ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՔ

Մեհափառ Ինքնակալը՝ իւր արքայական տղոցը Թլփատութեան հանդէսին վրայօք՝ բարձրագահ Փոխարքային հետեւեալ հրամանագիրը խրկեց, որ անոր ութերորդ շաբաթ օրը բարձրագոյն դուռը կարդացուեցաւ՝ ի ներկայութեան երեւելի նախարարաց։

### *ԻՄ ՎՍԵՄԱՓԱՌ ԵՊԱՐՔՈՍ

Յայտնի է քեզի որ տղայքս Մէհմէտ Մուրատ էֆէնտիին ու Ապտիւլ Համիտ էֆէնտիին Գուրան կարդալու սկզբնաւորութիւն ընելու եւ յաւ օրինի Թլփատութեան տօնախմբութիւն կատարելու ժամանակը հասաւ, ինչ որ միմիայն աստուածային վերին տեսչութենէ խնամոցը պատուն է։

Ուստի այս բարի գործոյն ներկայ տարւոյս մէջ Հայտար փաշա բնակած տեղը կատարուելու սահմանուեցաւ, եւ աստուծով յաջողելով շեւվալ ամսոյն ութերորդ օրը նոյն տեղը եղածներ պալատը երթալով, ինչպէս որ անոնց Գուրանի սկզբնաւորութիւնը ըլլալու եւ տասներորդ օրն ալ Թլփատութեան կատարուելու համար յարմար տեսայ, որ 12 օր շարունակ հարսանիք ըլլայ. որուն պատրաստութիւնները արդէն եղած են։ Իսկ որպիսութիւնը հրատարակելու մտօք այս արքայական հրամանագիրս գրեցի ու քեզի խրկեցի։

Այս բարձրեալն աստուած՝ մեր տէրութիւն եւ հպատակներուս երջանկութիւն ու հանդարտութիւն անեղծելու պատճառ եղող միջոցները ձեռք ձգելու մեզի յաջողութիւն շնորհէ, եւ ասանկ բարի գործերնիս ալ միշտ պակաս չընէ. ամէն։

---

Օգոստափառ Ինքնակալը Պայրամին առտուն Պէյլէր պէյիի պալատէն ելլալով Թօփգափուշի պալատը գնաց, ուսկից յառաջ սովորութեան փառաւոր հանդիսով Սուլթան Ահմէտի մզկիթը գնալով աղօթեց։

Այս հանդէսին ներկայ էին բարձրագահ Փոխարքայն, նախկին եպարքոս Րէշիտ փաշան, Խիւսրէվ փաշան, Իզզէթ փաշան, եւ բոլոր երեւելի նախարարները ու օրինականները։

Նորին Վեհափառութիւնը աղօթելէն յետոյ՝ նոյն հանդէսով Թօփգափուշի պալատը դառնալով՝ իւր Թագաւորական գահը բազմեցաւ, ուր տեղ բոլոր հանդիսականները խորին ակնածութեամբ շնորհաւորեցին զինքը։

Այն միջոցին թագաւորական նաւատորմներ ցնծացան. եւ ասոր յետոյ նախարարները ու օրինականները արքայական կանոնաւոր յարկը (սարայն) երթալով՝ մէկզմէկ շնորհաւորելէն ետքը տեղերնին վերադարձան։

Պայրամին երրորդ երկուշաբթի օրը՝ բարեխնամ Ինքնակալն իւր նախարարներուն ամառական հերթով ընդունելութիւն մը ըրաւ։

Բարձրագահ Փոխարքայն, ու Շէյխիւլըսլամ էֆէնտին եւ բոլոր նախարարները Պէյլէր պէյիի պալատը գնալով՝ խորին խոնարհութեամբ Նորին Վեհափառութեան ոտքը համբուրեցին, եւ մեծ առատական շնորհները վայելելէն յետոյ ուրախութեամբ վերադարձան։

---

Պէտէրհան պէյը ու անոր ընկերը Խան Մահմուտը նաեւ ուրիշ երեւելի Քիւրտերը որոնք ժամանակէ մը 'ի վեր մեծի Տէրութեան դէմ ապստամբելով՝ Քիւրտիստան բնակող ժողովուրդները կերպ կերպ վնասներ կը հասցունէին։

Բայց այժմ վեհափառ Ինքնակալին հզօր բազկաւը անոնց պարտութիւնը բնաջինջ ըլլալով՝ այն կողմերուն հանդարտութիւնը ձեռք անցաւ, ինչպէս որ նախընթաց թերթերուն մէկուն մէջ ալ յիշեցինք։

Մեծազօր Տէրութեան այս մասին ըրած հոգածութիւնը՝ յիշատակի պատմութիւններու մէջ նշանակելու արժան եղած կարեւոր բաներէն մէկը կը համարինք։

Ասոր զի յիշեալ եղեռնագործը ու անոր ընկերները այդքան տարիէ 'ի վեր Քիւրտիստանի բնակիչներուն ըրած հալածանքութիւնները (զուլումները) ու ծանր ծանր վնասները ըսելէն 'ի զատ՝ անոնց ամէն մէկը մէկ մէկ դունդ կազմելով՝ ապստամբութեան դրօշակը բացեր էին, որով կառավարութեան գործն ալ կարգէն ելած էր։

Բայց այս չարութիւնները ջնջել ու այն կողմերը մաքրելը թէ օրինի եւ թէ կանոնի հարկ ըլլալով եւ խնամակալ Ինքնակալին հովանաւորութեան ներքեւ ապաստան եղող ժողովուրդը՝ հանգստացընելը՝ մեծազօր Տէրութեան հզօր բազկին կարօտ գտնուելով՝ վասն զի բարեբաղդաբար այս մասին ինչ կերպ միջոցներ 'ի գործ դրուեցան նէ, բոլորն ալ վեհափառ Արքային բարեբաղդութեան պատճառ ըլլալով ուզած կերպովը բարի վախճաններ ունեցան։ Իսկ այս գործին վերաբերութեամբ գործող թէ մեծ եւ թէ փոքր զօրապետները եւ զօրական զինուորները որոնք որ ոգւով չափ աշխատեցան, անոնք ալ գովութեան արժանի եղան։

Ուստի աստուածադիր եւ բարեսիրտ Ինքնակալը՝ որոյ Թագաւորութիւն ընդերկայն աւուրս կացցէ, որովհետեւ իւր Տէրութեան պաշտօններուն մէջ ոգւով չափ աշխատող եւ հաւատարմութիւն ցուցնող բոլոր գործակալներուն իւր շնորհները անխնայ կը պարգեւէ, նորին աղագաւ՝ թէ այս գործին մէջ աշխատող մեծ եւ փոքր զօրապետներուն ու զինուորներուն փառաւորութեան նշան մը ըլլալու եւ թէ այն յաղթութեան յաւէտ յիշատակ մը համարուելու մտօք՝ հրաման ըրաւ, որ պատուոյ նշաններ շինուին ու յիշեալ զօրապետներուն եւ զինուորներուն նաեւ սրտալի պաշտօնատարներուն տրուին։

Այս արքայական հրամանին վրայօք՝ Տէրութեան երեւելի նախարարները յատուկ խորհուրդ ընելով որոշեցին, թէ որովհետեւ մեծի Տէրութեան ամէն մէկ երեւելի գործերը՝ Նորին Վեհափառութեան անունովը կարգի կը դրուին, եւ այս Պէտէրհանին պէյին դժուարին գործն ալ՝ Նորին իմաստուն կարգադրութեամբը գլուխն կերպով մը աւարտեցաւ. այսու պատճառաւ մեծազօր Ինքնակալը Քիւրտիստանի յաղթող աշխարհակալն (Ֆաթիհն) է, եւ այս գործին փառքը ու պարծանքը՝ միմիայն Նորին կը վերաբերի։ Ասոր համար նոյն

նշաններէն մէկ հատը մինչեւ որ նախ և յառաջ Նորին Վեհափառութիւնը իւր կուրծքը չը կախէ, ուրիշն բնաւ արժան չէ կախել։

Վերոգրեալ նախարարներուն այս խորհուրդը ընելէն ետքը՝ ընդհանուր ատենագրով մը խնդիր մատուցին Վեհափառ. Նորին, որն որ իւր նախարարներուն խնդրանացը զիջանելով ընդունելով՝ բարձրապատիւ Փոխարքային իւր հրամանագիրը (խատը ի շերիֆը) եղիկց։

Յիշեալ հրամանագրին ու ատենագրին թարգմանութիւնները հոս կը դնենք։

Թարգմանութիւն արքայական հրամանագրին։

## *ԻՄ ՎԵՍՏԱՓԱՌ ԵՊԱՐՔՈՍ

Մեր մեծ տատուածային նախախնամութեամբ Քիւրտիստանի վրայոք եղած յաղթութիւնը քրիստոնէ մը ըլլալու մասք՝ հրաման ըրեր էի, թէ նշաններ շինվին. այն նշաններէն մէկ հատը անձամբ կրելու համար խնդիր մատուցեր էք յատուկ ատենագրով, որն որ ստուգէ անցուցի։

Օգնականութեամբ ամենակարողին՝ այն կողմերուն վրայոք եղած պատերազմները լմնցած ըլլալուն՝ շնորհակալութիւն կընեմ. և այս մասին մեր կամացը համեմատ աշխատող բոլոր անձանց՝ զօրապետաց ու զինուորներուն ջանացողութիւնը որ տեսեր եմ, աւելի գովելով իմ գոհութիւս կրկին կը յայտնեմ, և այն նշաններէն մէկ հատը գոհութեամբ պիտի կրեմ, և այն ատենագիրը՝ իմ քովս պիտի պահեմ. Յիշեալ նշաններուն շինուածը ու կարգադրութեան գործը քեզի յանձնեցի։

Այս բարձրեալ տատուածը յաջողեալ ամենուս ամէն գործի մէջ յաջողութիւն շնորհէ, ամէն։

Թարգմանութիւն ատենագրին։

Բարձրեալն տատուած՝ ձեր Վեհափառութիւնը մեր ազգը ու Տէրութիւնը ծաղկեցընելու և հաստատելու համար՝ Օսմանեան թագաւորութեան գահը բազմեցուց, որ Ձեր գահը ժառանգած օրէն մինչեւ ցայսօր ձեր խռովականաց դիտաւորութիւնը՝ տատուածը Ձեզի աւանդեալ ժողովուրդը ու հպատակները երջանկացընել և Օսմանեան քաղաքները կարգադրել է։

Այս մասին Ձեր ըրած քաջասրտութեան արժանի բարի գործերը բոլոր աշխարք կը զարմացընէ, և ասոնց ամէն մէկը ժամանակիս քրիստոնի ու մէկ ազգի մը պատմութեան մէջ փառք և պարծանք ըլլալու բաներ են։

Բայց այս օր ժամանակէ մը 'ի վեր Քիւրտիստանի կողմը ապստամբութիւն ընող ու բռնակիչները հպատակցնալով Պէտէրհան պէկին ժողված բազմութիւնը լաւ օրինի և բաւ կանոնի ցրուելով, և թէ ինքը ու թէ անոր համախոհ գլխաւորները ապստամբները պատժել հարկ ըլլալով, օգնականութեամբ ամենակարողին այս մասին խնամուն ու աչալու միջոցներ 'ի գործ դրեր։

Ձեր մարդասիրական խնամքը վայելող կրթեալ զինուորները՝ նոյն պէկին դէմ սրիաբար մաքառելով՝ անոր ապստամբութէ հեռի ապաստանի խլեցին, ու բազմութիւնը ցիր ու ցան ընելով, թէ անոր և թէ ընկերներուն խռովութեան նշանները այն կողմերէն բնաջինջ ըրին. որ մեծական տատուածային վերին տեսչութեամբ՝ Ձեր Վեհափառութեան սահմանած բարի կարգադրութիւններուն պտուղն է։

Բանի մէկ երեւելի գործի մը մէջ ծառայող զինուորներուն և ուրիշ քանի մը ծառայներուն ըրած ջանքը գովելով՝ հրաման ըրեր էիք, որ 'ի նշան յիշատակութեան նորէն նշաններ շինվին ու շնորհվին անոնց։

Ասկայն ամենուն ալ յայտնի է որ մինչեւ հիմա Ձեր Տէրութիւնը հաստատելու համար սահմանված բարի անօրէնութիւններուն ամենուն ալ օրէնսդիրը Ձեր Խնամակալութիւնն է, և այս գործին ալ այսպէս բարի վախճանաւ աւարտիլը՝ Ձեր Վեհափառութեան հոգածութեամբ պտուղն է։

Արդէն Քիւրտիստանի գաւառը մինչեւ հիմա անուամբ և եթէ Օսմանեան նահանգ կը կոչվէին, ու իրաք խել մը բռնաւորներու ձեռքը անցած էին, ասկէ ետեւ Ձեր Խնամակալութիւնը Հէմայապէս տիրելով նոյն գաւառին, այս մասին մինչեւ այն ատենման հոգ ունեցաք, որ բնաւ երբեք չը մոցվի՝ նաեւ կայէս այս յաղթութեան փառքը ու պարծանքը բոլորովին Ձեր Վեհափառութեամբ կը վերաբերի։

Ասոր Քիւրտիստանի Հէմարխա աշխարհական (փաթէհ) գրանելով Ձեր Խնամակալութիւնը մինչեւ որ այն նշանը չըդնէր, բնաւ մէկի մը ալ տրվիլը արժան չէ, և այն նշաններէն մէկ հատը անձամբ կրելու եթէ բարեհաճիք, Ձեր ամէն ծառաներուն ալ պարծանք ու շնորհք մը կըլլայ։

Բայց այս բանին մեր հաստատութիւնը ատենակելով խորին խոնարհութեամբ այս ատենագիրը կը մատուցանենք, և բաւ ամենայն մասին Ձեր Վեհափառութեան բարձր հրամանին կսպասենք։

Այս ատենագիրը հետեւեալ նախարարները տուած են։

Մուսթաֆա րէշիտ՝ փոխարքայ։
Շէյխ հէլէմէթ՝ շէյխիւլիսլամ։
Մէհմէտ խիւսրէվ՝ պաշտօնատար գերագոյն խորհրդոյ։
Մէհմէտ սաիտ՝ սպարապետ։
Ահմէտ Ֆէթհի՝ հրամանատար թօփխանայի։
Մէհմէտ ալի՝ պաշտօնատար գերագոյն խորհրդոյ։
Մէհմէտ ըիֆաթ՝ նախագահ բարձրագոյն ատենին։
Խալիլ սալիհ՝ տէսուչ արքունի գանձատան։
Հասան ռիզա՝ տէսուչ վաճառականութեան։
Մէհմէտ ըէշիտ՝ հրամանատար յատուկ զօրաց։
Մէհմէտ Թահիր՝ տէսուչ արքունի փողերանոցին։
Մէհմէտ հաֆիզ՝ տէսուչ արքունի եվգաֆին։
Մէհմէտ արիֆ՝ անդամ բարձրագոյն ատենին։
Մէհմէտ էմին՝ կառավարիչ քաղաքական գործոց։
Մէհմէտ արիֆ գազազքէր՝ անդամ բարձրագոյն ատենին։
Մէհմէտ ալի՝ տէսուչ արտաքին գործոց։
Իսմայիլ էֆէնտի՝ խորհրդական փոխարքային։
Խալիլ վէհպի՝ տէսուչ արքունի նաւարանին։
Մէհմէտ Ֆուատ՝ ամէտճի արքունի դիւանին։
Մուհամմէտ նէշատ՝ մէքթուպճի փոխարքային։

---

Նըգիպատաի փոխարքայ բարձրապատիւ Մէհմէտ ալի փաշան՝ մեծի Տէրութեան հաւատարիմ նախարարներէն մէկը ըլլալով, և մանաւանդ Վեհափառ Խնամակալին վրայ իւր հպատակութիւնը ցոյց տալով՝ իրեն յանձնըված Նըգիպատաի գաւառը օր ըստ օրէ ծաղկեցընելու հոգ կը տանի։

Կեպրո գետը որ Նըգիպատաի մէջէն կանցնի, Ըէշիտ ու Ցիձէսթի կողմերը երկու ճամբայ ունենալուն՝ ամառուան ատենը՝ բարձր տեղերը դառնալով ագարակներն կառավարէր. բայց նաւարկութեան ատենը՝ ջուրը բարձր տեղերը չելլալուն՝ ռամկաւութեան շատ դժուարութիւն կը քաշէր։

Այս դժուարութիւնը վերցընելու համար՝ յիշեալ փաշան կամք ըրաւ որ այն ջրանցքներուն ատակները մէկ մէկ ամբ շինէ, և այս ուժերը Գամձա լա-

փոխ. Նեգոսի հաւանեալներուն երթեւեկութեանը արգելք չըլլալու համար՝ մէկ մէկ գունդ ալ բանակ: Այս բանին գործադրութեանը ձեռք զարկաւ, և այս շէնքը՝ մեհմատ փաշայականին բարձր անուանը յիշատակելի՝ մեծագոյն Տէրութենէն ալ կ'ունի.

Նորին Վեհափառութիւնը՝ աղքատացը խեղճ կատարեալ 'ի գլուխ, անոր վրայ ունեցած մարդասիրական գութը վերստին յայտներու և տարածյալ մը ըլլալու մասը՝ պատմութեան նշան մըն ալ շնորհեց, և այս նշանը իր անվհատական պաշտօնեաներէն պալատին առաջին ատենադպիրը գոնդրալ Շէֆիք պէյ էֆէնտիին ձեռամբը խրկուելուն հրաման ըրաւ. որն որ նշանը առաւ ու Մահմուտի բեռնաբերին առջևը շնորհակալ մնաց, և Եգիպտոս գնաց.

Նորբոր հօն հասաւ, Մէհմէտ Ալի փաշային հետ տեսնուելով՝ նոյն նշանը ու նշանին հրովարտակը (պէրաթը) նաև պետական հրամանագիրը (խաթթը շէրիֆը) արժանաւոր յարգութեամբ յանձնեց, և բարեխնամ Ինքնակալին ունեցած գութը ու խնամքը բերնով ալ հասկըցուց.

Մէհմէտ Ալի փաշան ալ պէտք եղած հպատակութիւնը ցոյց տալով՝ շնորհակալ եղաւ. և սաստ յիշեալ պէյը իր պաշտօնը կատարելով՝ նահրայ եկաւ, ու պալատին երկրորդ կիրակի օրը մայրաքաղաքս ժամանեց.

---

Անատօլուի բանակին համարակալ Ակիւաչ էֆէնտին իր պաշտօնին մէջ հաւատարմութեամբ ջանալուն համար՝ վեհափառ Ինքնակալն անոր առաջին աստիճանին առաջին կարգը (ռիւթպէ) ու նոյն կարգին նշանը շնորհելով վարձատրեց.

Մեծի Տէրութեան երեւելի գործակալներէն Թէվֆիքիյէթ պաշտօնը վարող Ալի բաֆֆ պէյը իր օրհնաւոր մեռաւ: Ասոր երեւելի կառավարիչերու գովու քէհեայի հաճի Քէչէճի էֆէնտին նոյն պաշտօնը վարելու բաւականութիւն ունենալուն՝ օգոստափառ Ինքնակալը անոր առաջին աստիճանին երկրորդ կարգը շնորհելով՝ Թէվֆիկի անուանեց.

Արքունի գանձատանը ժողովքին անդամները՝ երկու կարգէ բաղկացեալ ըլլալով, մէկ կարգը մուհասէպէճի էֆէնտիներն էին, որ ուրիշ պաշտօն ալ ունենալուն՝ միշտ չէին կրնար ներկայ ըլլալ. Իսկ միւս կարգը՝ մշտնջենաւոր անդամներէն էին, որոնք՝ գործոյն շատութեանը նայելով՝ անբաւական ուռիշ էին.

Ասոր քանի մը գրուած անձանց մշտնջենաւոր անդամ դրուիլը հարկ ըլլալով՝ Մայսայի նախկին համարակալ Քամիլ էֆէնտին, Արխանի նախկին համարակալ Անթո պէյը և խազինէդարու արքունի եկամուտը նախկին վերակացու Հասան Թահսին էֆէնտին, առանց գանձատանը մէջ 'ի մանաւանդ կլեալ և ... ըլլալով մշտագործեան, ու հրամանա Ինքնակալին նոյն ժողովքին մշտնջենաւոր անդամ կարգեցան.

Արտաքին արքունի եկամուտը վերակացու գոնդրալ Ահմէտ ախմա պէյին փոխանակ հարկաւորելով հրամանաւ Ինքքային նոյն պաշտօնը Նաքա քաղաքին երեւելիներէն Աղա խըզըֆի էֆէնտիին յանձնուեցաւ, որ երրորդ աստիճանաւորներէն էր, և բաւականութիւն ունէր յիշեալ պաշտօնը վարելու.

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՔ

Սուլթան Ահմէտի մզկիթին բակը մեծ բեւեռաձեւ ծառ մը կար, որ Պայրամի օրերը արեւելեան քամին սաստիկ փչելուն շրջեցաւ, բայց մէկու մը վնաս չեղաւ.

Ռամազանին 24 ին շաբաթ գիշեր ժամը չորսին տուներէ՝ Պէշիքթաշ Բուլ ... թաղը եօրղանճի Բէձէց ... տունէն հրդեհ պատահելով՝ հինգ տուն այրեցաւ.

Շեհզադէի երկուքին կիրակի օրը ժամը ինն ուկէսին տուները Գասըմ փաշա Պիրերի ... ծախող ... մզկիթին սղառտակին ... հրդեհ պատահելով. մեծամեծ տեղերուն վնաս մը չեղաւ, ու միայն նոյն սենեակը այրեցաւ.

Նոյն ամսոյն երեքին երկուշաբթի օրը ժամը իննուկէսին տուներէն Պէյ օղլու պալատին առաջքը համամը պաշի Նիկողոսին տունէն ... մը հրդեհ պատահեցաւ, և այն օրը արեւելեան քամին սաստիկ փչելուն՝ կրակը տարածուեցաւ, ու տեղ տեղ բաժնուելով՝ 70 տուն. 40 խանութ և չորս գինետուն մոխիր դարձուց.

Գարձեալ նոյն ամսոյն 6 ին հինգշաբթի գիշեր ժամը վեցին տուները՝ Սուլթան Սելիմ Հաքերիմ թաղը գրագիր Ակիւաչ էֆէնտիին տունէն կրակ պատահելով չորս տուն այրեցաւ.

Նմանապէս յիշեալ ամսոյն վեցին հինգշաբթի օրը ժամը երկուքին տուները՝ Սուլթան Մէհմէտ ... նէյան ... կոչը եղած թաղին խանը հրկիզութեան ըլլալով, երկու խան և 30 ին աւելի խանութ այրեցաւ.

---

### Նիւ-Եորքի Օրագիրը՝ Հետեւեալ Լուրերը կու տայ.

Նոյեմբեր 13—14 տարեկան աղջիկ մը ասեղ կլլելու խենթութիւն մը ընելով, քանի մը հարիւր հատ կլլեր է. Խորը՝ կուրծքին սաստիկ երկունք մը և եւ մը պատահելուն՝ վիրաբուժութիւն մը ձեղքեր են կուրծքը, ու խիստ մեծ գնդասեղ մը դուրս հաներ են. Ամենայն բազուկէն մինչև ոտքերը տեղ տեղ ասեղներ ըլլալով՝ ծայրերը դուրս կելլէն եղեր, որոնք մէկիկ մէկիկ ձեղքելով հաներ են.

Ասիկէ 'ի զատ՝ խել մը ասեղներ ալ արգանդէն և ուրիշ տեղերէն ծայր ցըցըներուն՝ վիրաբոյժ մը քանի մը հատը հաներ է. բայց աղջիկը այս ցաւէ ազատութեան ... չէ կենալուն՝ ամմէն օր ամէն մէկ տեղուցը մէկ մէկ ասեղ դուրս կելլէ եղեր.

Մեծ Հոլլանդա օր լաւ օրէ տկարանալով աղջիկը 37 տարեկան մեռեր է. անդամազննները անոր մարմինը ձեղքելով՝ նայեր են որ բոլոր գործիքները աղեղնելով լեցուեր են, մանաւանդ սրտին վրայ ասեղները ցցուած մնացեր են.

Այս տեղ գործածող արհեստաւորներուն և կար կարող կանանց վտանգաւոր է ասեղը բերան առնելով դերձան ոլորելը. վասն զի ասեղը բերանին մէջէն եթէ քիչ մը աւելի շնչութիւն ըներ հարկ ըլլայ, կրնայ պատահիլ որ շունչը ներս քաշած ատենը ասեղն ալ հետը ներս երթայ, ինչպէս որ շատ անգամ եղած է. Մարմնին ... որ ասեղին համար ծայրը կլլուած ատենը դէպ 'ի վար ըլլալով՝ ստամոքսը գացած ատենը վնաս մը չըներ, չհասնի դէպ 'ի փորոտիքը ... նորա տեղէն դուրս կելլայ. բայց ամէն ատեն առանց անվնաս չըլլար, կամ փորոտիքին մէջ և կամ գործիներուն մէկին վրայ կը ցցի կը մնայ.

Պատահմամբ՝ եթէ ասեղ մը մարդուս բերանէն 'ի վար երթայ, և կոկորդին մէջ մնայ, այն մարդուն լեզուն դպչելով ու ժամ մը վար կոխելու է, և բերանը աղէկ մը բանալով ձեռքով դուրս քաշելու է ասեղը.

Բայց եթէ ասեղը ձեռքով չյանձվի, գլուխով բռնելու հանելու է. և եթէ ասեղը կլլուած է, ան ատենը կաթ, շաքարով ջուր, մեղր ջուր և այլ ասանց նման անուշ խմելիքներ խմցունելու է. և երբոր ասեղը տեղաց մը ծայր ցցընէ, այն տեղը ձեղքելով

դուրս հանելու է. և կամ դրամով քաշելու է։

Եթէ մարդը տկար և անկար ըլլալով՝ ձեղքելը իրեն վնասակար ըլլայ, ան ատենը խիղճն մաս մը քանդելով՝ մէջ տեղէն ձեղքելու է, ու սոր ասդ անղին եղած տեղին վրայ դնելու է. փորձուած է որ միւս միսը ատեղը քաշելու դրամէն աւելի զօրութիւն ունի, և եթէ 24 ժամ՝ վրան կենայ, վխրութիւն մը ատեղը դուրս կը քաշէ կը հանէ-երեր։

---

Լոնտոնացւոց անգլիական լրագիրը ամսոյն 11 երորդ օրը՝ Անգղիոյ տէրութենէ խորհրդարանը գոցուեցաւ. բայց մէհամետ թագուհին օր մը յառաջ ռուսիական կէրպի խորհրդարանը գնաց ու ատենաբանութիւն մը ըրաւ, որուն քանի մը պարբերութիւնները թարգմանելով հոս կդնենք։

Մէկ ատենակից տէրութեանց, և երեսփոխանք ազգիս. նախ և յառաջ որոնց գոհութիւնը կը ծանուցանեմ ձեր ըրած ջանացողութեան ու ձեր ընծեցուցած միջոցներուն վրայօք՝ անցեալ տարի պատահած թշուառութիւններուն առաջքը առնելու համար, որոնք մինչև հիմա ոչ եղած էին և ոչ անհրաժեշտ. նմանապէս Իռլանտայի կղզին բնակող հպատակներուս համար ալ՝ ձեր ըրած հոգածութեանը շատ հաւանեցայ, որոնք զանազան թշուառութիւններով նեղութեան մէջ ինկած էին։

Ապա նոյն կղզին բնակիչներուն մշտնջենաւոր հանգստութեան համար գրուած քանի մը կանոններն ալ կատարեալ յաջողութեամբ հաստատեցի. և հին տեղի հաղորդութիւնը ծածկելով՝ հասոյթներուն զօրացմանը պատճառ եղող առևտրագործութիւններուն գործադրութիւնը կատարեալ սիրով կամք ըրի։

Օտար տէրութեանց հետ մեր ունեցած հաղորդակցութեանը նայելով կիմանամ, որ ամենայն հետ կապած բարեկամական ու սիրոյ կապերնիս մշտնջենաւոր պիտի մնայ։

Բորթուգալի տէրութեան ատեմանը եղած խռովութիւնը վերցնելու համար՝ Գաղղիացւոց վեհափառ թագաւորին և Սպանիոյ ու Բորթուգալի վեհափառ թագուհիներուն հետ միաբանելով, պէտք եղած միջոցները բանեցուցինք. որոնց պտուղը ըլլալով՝ նոյն ատենը քանի մը ամիսէն 'ի վեր պատահած ապստամբութեան ամենայն սպանանդութիւն ըլլալու տարաշխարհն սոյնպէս շատ զոհ եմ։ Այսուհետև ալ նոյն ատենին մէջ խռովութիւն եթէ պատահի, ինչպէս որ կը կարծուի, առանց զէնքի ձեռք զարնելու հաշտութիւն ըլլալը կուզեմ։

Մէկ երեսփոխանք ազգիս. հասարակաց ծախքին համար պէտք եղած նոր տուրքը կատարեալ հաւանութեամբ ընդունեցիք, ինչ ձեր ձիրքէդ ըրաւ. ուստի կը ծանուցանեմ՝ ձեզի որ այս եկամուտը աւելի նկատելով ալ հոգածութեանս խնամ ըլլայ։

Սովին ու պտղոց պատճառաւ ամէն կերպ ապրանաց գները բարձրացան. բայց յետոյ բարեբաղդին, մինչև հիմա եկամուտներս ծախքերէն աւելի եղած ըլլալը խնդրելով կը յայտնեմ. վասն զի եկամուտն աւելի ըլլալը անյուսալի էր։

Մեր ատեմանը՝ հասարակաց կրթութեան գործը որ քանի օր յառաջացնելու համար ձեր ցուցած տեսած ջանքը՝ հասարակութեան կրօնական և քաղաքական հանգստութիւնները աւրելու համար ըլլալը յայտնի է։

Մէկ աղնուականք տէրութեանս, և երեսփոխանք ազգիս. աղօթելով կը կամիմ որ խորհրդարանիդ գործքն ու նորէն անդամներ ընտրուին. և բոլոր հպատակներուս հետ՝ ամենուն վերին տէրութենէն կը խնդրեմ որ այս տարի ազգին ու երկրին կրած նեղութիւններուս փոխարէն՝ առատութիւն ու արգասաւորութիւն ըլլալով աւելի ըլլայ, որով բոլոր հասարակութեանս ալ հանգիստ կեանք վարելու պատճառ ըլլայ։

---

Լոնտոնացւոց անգլիական լրագիրը ամսոյն առաջին օրերը Լօնտրայի մէջ ցորենոց գները իջան, և միջին օրերը ցորենին 'ի վար ուրիշ աւելի բանեցուն գիներն ալ ածուեցան։

Այս տարի վերահասնելի հունձքը դիւրև աւելի առատագոյն եղած է, բայց այս խօսքը սուտ է. վասն զի այս հունձքը շատ ալ կերևի։

Ուստի յուսալի կը տեսնուի որ մինչև հիմա ցորենի ու սովութեան պատճառած նեղութիւններէն՝ այս տարի հասարակութիւնը կազատի։

Այս օրերս յայտարարութիւն մը հրատարակուեր է, որ Լօնտրայի քիմիական գործատանը մէջ ամէն որ գործած վառ եփած երկաթէ գործիքը ժանգ չը բռնելու հնարը մ'որ գտնայ, անոր փոխարէն 1000 լիտր սթեռլին, այսինքն՝ 110,000 ղուշ պարգև պիտի տրուի։

Գերմանական Օրագիրը Լօնտրայի մէջ հրատարակուած թղթին ստնելով հետևեալ ցուցակը կը դնէ, որ է Անգղիոյ տէրութեան նաւատորմիղին մէջ գտնուած զօրապետներուն ու զօրաւորաց թիւը։

| [illegible] | |
|---|---|
| 00032 | Ամիրալ |
| 00045 | Երկրորդ ամիրալ |
| 00073 | Ըռէալ |
| 00361 | Նաւապետ |
| 00879 | Գումանտա ըլող |
| 02400 | Միւլազիմ |
| 00519 | Ուսուցիչ |
| 00594 | Զօրավոր առաջնութեան |
| 00462 | Գործակալ հոգւոյ |
| 00235 | Գրագիր |
| 40000 | Նաւաստի |
| 12000 | Ծովային զօրք |

Անգղիոյ տէրութեան թէ ստորէն չմնալու վրայ եղած և թէ ծովուն վրայ գտնուած պատերազմական նաւերուն ու շոգենաւերուն թիւը։

| | |
|---|---|
| 875 | Մէկէն մինչև 120 թնդանօթ քաշող պատերազմական նաւ։ |
| 160 | Հարիւր ձիոյ կարողէն մինչև 750 ձիու ուժ ունեցող շոգենաւ։ |

---

Աւստրիոյ ու Բրուսիոյ և Բաւարիոյ տէրութիւնները՝ Իտալիոյ սահմանը գտնուած տէրութիւններուն ու իշխաններուն յառաջ դրած պատուէր խրկեր են, որ նոյն սահմանը մինչև հիմա ինչ կերպ քաղաքական կանոններ կան, անոնցմէ բան մը չը պակսի և չխեղուի։

Բորթուգալի սահմանը՝ այս տարի հասոյթը անանկ արգասաւոր և առատ եղեր է, որ բնաւ մարդու միտք չէր անցներ։

Այս տարի Նորատացւոց յանախ մէկին Փիլատելֆիոյ սահմանը գտուած եղաւ. 3,027,452,000 ընտիր գըրեներ. անցեալ տարւան պտուղներէն 7704 հոգի աւելցեր է. 1843 էն 32178 հոգի աւելցեր էր. այս տարւան աւելորդը քիչ ըլլալ է։ Այս նուազութիւնը կերևի որ անցեալ տարի պատահած զանազան հիւանդութիւններէն և շատ գերդաստան օտար երկիրներ պանդխտութիւն ընելէն յառաջ եկած ըլլայ։

Իսլանտա կղզին Հէքլա ըսուած հրաբուխը լեռը ամիս մը 'ի վեր կը վառուի, սաստիկ ձայներ կը հանէ. ուստի Տանիմարգայի վեհափառ թագաւորը Սիջիլիայի գէնի Ճեմարանին անդամներէն երեք գիտնական անձինք ղրկեր ու խրկեր է, որ քննեն և հասկընան՝ արդեօք նոյն լեռը մշտնջենաւոր վառելու յատկութիւն ունի մի, թէ ոչ։